ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-7-1-Ա

ք. Երևան 31.08.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի օգոստոսի 31-ի նիստում քննարկեց 2016 թվականի հուլիսի 1-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ «Նացիոնալնայա վոդոչնայա կոմպանիյա» ՍՊԸ ընկերության (Smilianske shose, 8-i kilometr, bud. 2, s. Stepanky, Cherkaskyi raion, Cherkaska oblast 19632 (UA)) «Շիշ» արդյունաբերական նմուշի (DM/086512) գրանցումը ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Արդյունաբերական նմուշի գրանցումը ամբողջությամբ մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտարկված արդյունաբերական նմուշը չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ եւ 23-րդ հոդվածներով սահմանված պահպանունակության պայմաններին.

«Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի եւ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշի հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 41-րդ գլխի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն հայտնում ենք Ձեզ, որ տվյալ նմուշը ենթակա չի գրանցման, քանի որ այն չի համապատասխանում արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմաններից մեկին՝ նորությանը: Արդյունաբերական նմուշը նոր է, եթե չի հայտնաբերվել նույնական արդյունաբերական նմուշ, որը հանրամատչելի է դարձել մինչեւ պետական լիազոր մարմին հայտ ներկայացնելու թվականը, կամ եթե խնդրարկվում է առաջնություն, ապա՝ մինչեւ առաջնության թվականը, ընդ որում, արդյունաբերական նմուշները համարվում են նույնական, եթե դրանց բոլոր հատկանիշները համընկնում են կամ տարբերվում են ոչ էական մանրամասներով:

Տվյալ դեպքում ներկայացված «Շիշ» արդյունաբերական նմուշը ենթակա չէ գրանցման, քանի որի Ձեր կողմից նշված էական հատկանիշների համախմբությունը կրկնում է «Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից գրանցված ծավալային ապրանքային նշանը (վկայագիր No6443):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը ամբողջությամբ բավարարելու, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և արդյունաբերական նմուշը գրանցելու վերաբերյալ, քանի որ կոլեգիայի կարծիքով փորձաքննությունը խիստ է վերաբերվել նորության որոշման հարցին, նկատի ունենալով, որ հայտարկված արդյունաբերական նմուշը որոշ էական հատկանիշներով տարբերվում է հակադրված ապրանքային նշանից:

Բողոքարկողի ներկայացուցիչը նույնպես համաձայնվեց կոլեգիայի առաջարկի հետ:

Փորձաքնության բաժնի փորձագետը նույնպես համաձայնվեց այդ կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Շիշ» արդյունաբերական նմուշը (DM/086512) գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ